ՀԱՍՏԱՏՈՒՄ Է՝

Տնօրեն Ա. Խոջայան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱԾԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Տավուշի մարզ, ք. Իջևան

Թիվ 4 հիմնական դպրոց, VIIIա դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Կարապետյան Լիլիթ

դասղեկի ազգանունը, անունը

«2022 - 2023 » ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը)** *Դասարանը բաղկացած է յոթ հոգուց: Ընդհանուր առմամբ աշակերտները ունեն բավարար ընդունակություններ: Չկա գերազանց սովորող աշակերտներ: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են: Դասարանի որոշ աշակերտների սոցիալական վիճակը գնահատվում է անբավարար: Չնայած այս հանգամանքին՝ երեխաները հաճախում են դպրոց ճիշտ ժամանակին և ցուցաբերում են ակտիվություն: Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ:*

2. **Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում** *Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին , որպեսզի շտկել այդ թերությունները: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :*

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 **Հոգևոր դաստիարակություն** *Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:*

3.2 Գեղագիտական դաստիարակություն *Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:*

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն *Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ : Նշել մի շարք ֆիդայիների անուններ և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստ ձևերը:*

3.4 Ֆիզիկական դաստիարակություն *Դասապրոցեսին պետք է ցուցաբերով ակտիվություն : Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոձեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով:*

3.5 Աշխատանքային դաստիարակություն *Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը ր աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:*

3.6 Բնապահպանական դաստիարակություն *Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ , որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է:*

4. Դպրոց-ընտանիք կապը *Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց ընտանիք կապը, որպեսի աշակերտները ավելի լավ սովորեն:*

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	կատարման ժամկետը	Կատարողներ
1	<<Ամառային ճամբար>> այս վարժության նպատակն է աշակերտների մոտ ձևավորել հանդուրժողականության գաղափարը	սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
2	<<Քանի լեզու գիտես այնքան մարդ ես >> թեմայով զրույց: Ձևավորել բազմակարծություն և աշխարհահայացք	սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
3	<<Եթե ես լինեի …>> թեմայով քննարկում: Նապատակն է վեր հանել կարողությունները և հմտությունները:	սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
4	<<Կարողությունների հստակեցում >> թերթիկի միջոցով հստակեցնել թե ինչ կարողություններն են ավելի զարգացած:	սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
5	<< Ես էլ քեզ նման եմ >> թեմայով զրույցը հնարավորություն կտա ձևավորել հարգանք դիմացինի նկատմամբ:	հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
6	«Ժամանակի ճիշտ կառավարում»: Ժամանակի ճիշտ պլանավորման և կառավարման, առաջնային և երկրորդային գործողությունների դասակարգման և իրականացման հմտությունների ձևավորում	հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
7	<< Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում>> նպատակն է հստակեցնել աշակերտների մոտ իրենց իրավունքները և պարտականությունները:	Հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
8	«Ինչպես կողմնորոշվել բարդ իրավիճակներում»: Երեխաները փորձում են բարդ իրավիճակներից դուրս գալու ուղիներ որոնել, կողմնորոշվել դժվար իրադրություններում, իրավիճակներին նայել այլ տեսանկյունից, զարգացնել տրամաբանությունը	հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
9	Վիկտորինա: գիտելիքների ամրապնդում, հետաքրքիր ժամանց, կարևորվում են թիմային աշխատանքն ու հաջողության ձգտումը	նոյեմբեր	աշակերտ դասղեկ
10	«Ինչպե՞ս ապացուցել քո ճշմարտացիությունը»Սովորել խոսել միայն ճիշտ փաստերով, առողջ բանավիճել, ապացուցել սեփական ճշմարտացիությունը, ընդունել դիմացինի կարծիքը	նոյեմբեր	աշակերտ դասղեկ
11	<< Գնահատիր ինքդ քեզ >> նպատակն է արժևորել արժե համակարգ ինչպես նաև կարողանալ կատարել ինքնավերլուծություն:	Նոյեմբեր	աշակերտ դասղեկ
12	«Ինձ մոտ ձևավորված վատ սովորությունները», Երեխաների մոտ զարգացնել առողջ ինքնաքննադատությունը, իրերին և սեփական արարքներին այլ տեսանկյունից նայելու կարողությունն ու հմտությունը, գնահատել արարքներն ու կշռադատել վատ սովորությունները	նոյեմբեր	աշակերտ դասղեկ

13	<< Բնական աղետներ >> ներկայացնել բնական աղետների առաջացման պատճառները և դրանց հետևանքները:	Դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
14	<< Կարող եմ օգտակար լինել >> թեման հնարավորություն կտա աշակերտների մոտ ձևավորել բարին և դրական հատկանիշները:	դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
15	«Քչերը գիտեն, որ. . . »Երեխաները միմյանց ներկայացնում են հետաքրքիր փաստեր ամենատարբեր երևույթների մասին, որոնց մասին քչերը գիտեն, ստանում են նոր ինֆորմացիա	դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
16	<< Փոքրիկ պատմություններ անհատի և հասարակության խնդիրների մասին >> նպատակն է աշակերտներին տեղեկացնել թե մարդկությունը ինչ ժամանակաշրջան է անցել:	դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
17	<< Ազգային և միջազգային տոներ>> նպատակն է հստակեցնել ազգային տոների առանձնահատկությունները և ազդեցությունները:	հունվար	աշակերտ դասղեկ
18	Հանդիպում հոգեբանի հետ	հունվար	աշակերտ դասղեկ
19	«Լավ է, երբ...վատ է, երբ...» բանավեճ : Երեխաները տարբերակում են ամենատարբեր լավ և վատ երևույթները, սովորում են «առողջ» բանավիճել, հակադարձվել՝ բերելով հիմնավոր փաստարկներ	հունվար	աշակերտ դասղեկ
20	«Ինչպե՞ս չկորցնել հարազատ մարդկանց վստահությունը» Երեխաները վերանայում են իրենց քայլերը, արարքներ, իրենց փոխհարաբերությունները հարազատ մարդկանց և շրջապատի հետ	փետրվար	աշակերտ դասղեկ
21	<< Ինչպես վարվել աղբի հետ >> օգնել սովորողներին գիտակցելու աղբի և թափոնների վնասակար ազդեցությանը բնության և մարդու առողջության վրա:	փետրվար	աշակերտ դասղեկ
22	<< Սպառողների իրավունքներ >> ներկայացնել և ձևավորել իրենց իրավունքները , որպես սպառողներ:	փետրվար	աշակերտ դասղեկ
23	«Համակարգիչն ընկե՞ր, թե՞ թշնամի» Հասկանալ, թե ինչ դեր ունեն համակարգիչը, հեռախոսը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները աշակերտի կյանքում, տարբերակել դրանց դրական և բացասական կողմերը	Փետրվար	աշակերտ դասղեկ
24	<< Ինչու է պետք ներառումը >> աշակերտների մոտ ձևավորել հանդուրժողական վերաբերմունք հատուկ կարիքավոր մարդկանց նկատմամբ:	մարտ	աշակերտ դասղեկ
25	«Պահպանված և չպահպանված հին հայկական ավանդույթներ» Երեխաները ծանոթանում են հին հայկական ավանդույթներին և այն տարրերին, որոնք ներկայումս չեն պահպանվել, ազգային գիտակցության ամրապնդում	մարտ	աշակերտ դասղեկ
26	«Ո՞վ է հոգեպես հարուստ իմ կարծիքով» Սովորել դասակարգել անկարևորն ու անկարևորը, արժևորել կարևորը, ձևավորել արժեհամակարգ, կարողանալ կատարել ինքնավերլուծություն	մարտ	աշակերտ դասղեկ

27	«Դեպքեր նշանավոր մարդկանց կյանքից» Երեխաները ծանոթանում են հայտնի մարդկանց կյանքի պատմությանը, սովորում են չկոտրվել ձախողումներից, հիմնվում են դրական օրինակի վրա	ապրիլ	աշակերտ դասղեկ
28	<< Պատասխանատու քաղաքացի >> աշակերտները այս թեմայի ուսումնասիրելուց հետո կիմանան թե ինչպես պետք է լինի ցանկացած քաղաքացի:	ապրիլ	աշակերտ դասղեկ
29	<< Պետք է արդյոք, խնայել >> խթանելով աշակերտների ստեղծագործական մտածողությունը ձևավորել բնության և բնական պաշարների հանդեպ խնայող վերաբերմունք	ապրիլ	աշակերտ դասղեկ
30	<< Հայոց Մեծ եղեռն >> աշակերտներին ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունը : Նրանց մոտ սերմանել հայրենասիրություն:	ապրիլ	աշակերտ դասղեկ
31	Դասարանական մարզական մրցույթ:	մայիս	աշակերտ դասղեկ
32	«Ազգային երգն ու պարն ու մենք» Հասկանալ, թե ինչ դեր ունի այն աշակերտի կյանքում, տարբերակել դրանց դրական և բացասական կողմերը: Երաժշտական նախասիրություններ	մայիս	աշակերտ դասղեկ
33	Հումորի մասին Զրույց հումորի մասին: Կփորձենք պարզել, թե հումորը երբ կարող է վիրավորել մարդուն, որ թեմաները փակ են հումորի համար	մայիս	աշակերտ դասղեկ
34	Ուսումնական տարվա ամփոփում, «Ի՞նչ եմ տանում այս տարի ինձ հետ դպրոցից» թեմայով քննարկում: Երեխաները ամփոփում են ուսումնական տարին, նշում են անցնող ուսումնական տարվա ձեռբերումները, հետաքրքիր պահերը և դպրոցի դերը դրանց մեջ	մայիս	աշակերտ դասղեկ